

ՈՐՊԷՍՋԻ ԴՈՒՆ ՄՆԱՍ ՄԻՇՏ ՎԱՌ

Որպեսզի դուն մնաս միշտ վառ,
Մանկութենեա մինչեւ այսօր
Եւ կեանքս քի աղողւ պայքար
Ուժերու դէմ գերահօգոր:

Մերք ճիւղական, մերք տարուբեր
Այիքներու մէջ լեռնադէզ,
Եւ քեզ ուժգին բռնեցի վեր՝
Խեղդըւող մօր զաւակին պէս...

Քանի՜ անգամ դարձաւ վահան
Հոգիս բազում վերք ու խոցի,
Եւ ո՛րքան շատ ու ժա՛նճ եղան
Թշնամիներդ ալ ամենի...

Պէտք էր փօրել շղթան մարդոց,
Որ օրրանիդ մէջ քեզ զարկին
Եւ խորհակել դռները զոց
Հայու դաժան հակառակին:

Յետոյ որպէս մէկ անթափանց՝
Իջան վրադ օրերն անկեանք
Եւ սովն անեղջ գեղեցկութեանց՝
Սա մեր մաշած ձեղունին տակ...

Քանի՜ խաւար գինեսեղան
Եւ ախտաւոր սիրոյ մահին,
Յանուն քու սուրբ աստուածութեան՝
Քեզ կանգնեցին խաչ սպանիչ...

Ամենագոր փայլն արծաթին
Եւ փառքն ունայն համբաւներուն
Աշուրներուս դէմ վառեցին
Հազար քովչանք ու փորձութիւն:

Եւ դեռ իմ մէջ դարանակալ
Միտքն ըսկեպտիկ ու բազմագէ՛տ
Կրնար դաւել, յետոյ խնդալ՝
Հեզնաժպիտ ամբոխին հետ:

Ո՛չ մէկ ընկեր ունեցար դուն.
Բայց միայն ե՛ս քեզի տանար,
Եւ քեզի բերդ, աստղատուն,
Պահեցի քեզ սուրբ ու պայծառ...:

Մ. ԻՇԽԱՆ